№ 190 Հոկտեմբերի 29 (Նոյեմբերի 10) 1880 Հոկտեմբերի 29 (Նոյեմբերի 10) № 190

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Գաղարաղարացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ սով:—Ներքին տեսութիւն: Նամակ Սուխումից: Նամակ Ջուլֆայից: Նամակ Վարդաշէնից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Աստրո-Ունգարիա: Սովի առիթով ազգութեան մասին: Պարսկաստան: «Դէլի-Նիուս» լրագրի թղթակցութիւնը:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ԴԱՐՁԵԱԼ ՍՈՎ

Մենք լուրեր ենք ստանում Կ. Պոլսից, նոյն իսկ սովելոց խնամող կենտրոնական մասնաժողովից, որ սովը Թիւրքաց Հայաստանում դարձեալ սաստկանում է: Մեզ խնդրում են հրաւիրել մեր ազգայիններին նիւթական օգնութիւն հասցնել Թիւրքաց հայերին:

Նոյն լուրը կարդում ենք և անգլիական „Դէյլի-Նիուս" լրագրում: Անգլիական լրագիրը ասում է, որ եթէ այս ձեռը օգնութիւն չը հասցնվի Թիւրքաց Հայաստանին, սովի միջոցով աւելի մեծ կոտորած կարող է լինել Հայաստանում, քան թէ մինչև անցեալ տարի է եղել: Լրագիրը պնդում է որ Կարինի ռուսաց հիւպատոս Օբերմիլլերի հաղորդած լուրերը, իբր թէ այլ ևս սով չը կայ Հայաստանում, սխալ է: Ընդհակառակն սովը սաստկացել է և ոմանք կարծում են որ մասամբ նոյն իսկ սովն է պատճառը որ քիւրդերը Հայաստանի մէջ կերակուր չը գտնելու պատճառով, արշաւել են դէպի Պարսկաստան:

Մենք լսում ենք որ Կ. Պոլսի Ներսէս պատրիարքը դիմել է նամակներով դէպի Թիֆլիսեցի մի քանի անուանի և հարուստ հայեր, խնդրելով որ կազմեն մի մանաժողով և փողեր հաւաքեն մեզ մօտ Թիւրքաց Հայաստանի խղճալի դրութեանը օգնութիւն հասցնելու համար:

Յուսանք, որ պարոնները ճշմարիտ կը կազմեն մի մանաժողով և եռանդոտ կերպով կը հանդանակեն մի գումար որ և կուղարկեն կենտրոնական մանաժողովին:

Մենք էլ, մեր կողմից շարունակում ենք և կը շարունակենք հաւաքել նուէրները յօգուտ սովատանջների:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՈՒԽՈՒՄԻՑ

22 հոկտեմբերի

Աբխազները կրկին խումբ խումբ վերադառնում են այստեղ, իրանց գաղթականութեան դառն բաժակը մինչև վերջին կաթիլը դարդակելուց յետոյ, բոլորովին մերկ, թշուառ, աղքատ, մաշված և գրեթէ կըմախք դարձած հիւանդութիւնից և գլխաւորապէս քաղցածութիւնից: Ինչ և իցէ, դրանք ստացան իրանց արժանի պատիժը, ցիր ու ցան եղան, երկու տարուց աւելի թափառեցին Թիւրքիայի զանազան մասերումը և վերջը վերադարձան, ինչպէս ծոյլ և անընդունակ ժողովուրդ, որը սովոր լինելով իր հայրենիքում բնութեան պարգևած առատ բերքերովը սնունդ ստանալ առանց աշխատութեան, երևի, չը կարողացան մշտական բնակութիւն հաստատել Թիւրքիայում, ուր ի հարկէ ֆիզիքական ծանր աշխատութեամբ պէտք էր ձեռք բերել իր ապրուստը: Ուշադրութեան արժանի է այն, որ այս վերադարձող աբխազների բազմութեան իգական սեռի միջից բացակայ են գեղեցկուհիները, որոնք, երևում է, բռնի կերպով հարճ են գնացել Թիւրք էֆէնդիներին կամ, իրանք աբխազներն են վաճառել, չքաւորութիւնից ըստիպված: Սկզբում, ինչպէս յայտնի է, Սուխումի ու Բաթումի կառավարութիւնները, իրանց յայտնի պատճառներով, չէին ընդունում եկողներին և յետ էին ուղարկում: Այս ահագին խմբեր զանազան առագաստաւոր նաւերի և նաւակների վրա, Սև ծովում, տարուբերվում էին մի սահմանից դէպի մի այլ սահման դիմելով, և վերջը եթէ Փոխարքայի ողորմած մարդասիրութիւնից անյայտ միայն,*) գուցէ վիճակված էր դրանց ծովի յատակում յաւիտենական հայրենիք ժառանգելու: Ամոյս 4-ին շոգենաւով մօտ 20 ընտանիք Բաթումից Սուխում եկող աբխազները, Սուխումի ափերը հեռուից տեսնելով, մեծ ուրախութիւն էին արտայայտում, ասելով «փառք Աստուծոյ, որ դարձեալ արժանանում ենք այն հողին, որի մէջ ամփոփվում են մեր նախահայրց ոսկորները»: Այս, ի հարկէ, այդ տեսակ վայրենի ժողովրդի համար մի այլ կլիմայի տակ ապրելը մահ է, իսկ Սուխումի գաւառը կարող է միայն պահպանել դրանց կեանքը, որովհետև այստեղ նրանց ապրուստը ամեն բանով հոգում է և արտադրում է ինքը բնութիւնը, ոչինչ աշխատանք չը պատճառելով դրանց, ինչպէս են՝ խաղողը, մեծ քանակութեամբ խնձորը, տանձը, նուռը, ընկոյզը, կաղինը, մեղրը և շատ տեսակ մրգեղէններ և բանջարեղէններ անտառներում, բացի սիմինդրից (кукуруза), որը ցանում էին այնքան, որքանով հազիւ կերակրվում էին իրանք: Սրանից մի քանի տարի առաջ հազիւ արտադրվում էր այստեղից մինչև 20,000 պուդ սիմինդր, բայց Սուխումի գաւառի ահագին տարածութիւնից, եթէ ժամանակով հողագործութիւնը անցնի գործունեայ ժողովուրդների ձեռքը, իւրաքանչիւր տարի կարելի է միայն սիմինդր արտադրել աւելի քան կէս միլիոն պուդ, որովհետև կլիմայի բարերար ազդեցութեան ներքոյ և հողի արգաւանդութեան շնորհով մի հատիկ սիմինդրից 1200—1500 հատիկ սիմինդր է ստացվում միջին թւով:

Արդարև, մարդ չէ կարողանում սառնասրտութեամբ նայել այդ վերադարձող թշուառ աբխազ ամբոխի վրա, որոնք ամեն բան սպառած, և իրանց մեծ մասը կորցրած պատերազմում կամ գաղթելու ժամանակ, այժմ հիւանդութիւնից ու չքաւորութիւնից ստիպված, կրկին վերադառնում են այստեղ: Բայց արդեօք դրանք այսուհետև մարդկօրէն ապրել կը սովորեն, արդեօք խրատվեցին այս վերջին պատերազմից կրած անտանելի տանջանքներից,—այդ ապագան ցոյց կը տայ: Բայց այժմ հարկաւոր է հարցնել քաղաքի մէջ թափառող ծեր մուրացկաններից, թէ ի՞նչպէս էիք ապրում Տաճկաստանում և ի՞նչպէս ընդունեցին ձեզ տաճիկները, և կամ ի՞նչու համար կրկին գալիս էք այստեղ: Սրանք պատասխանում են, թէ «մենք տաճիկներից շատ գոհ մնացինք, մեզ պահում, կերակրում ու պատւում էին, իսկ վերադառնում ենք նրա համար, որ մեր պապերը այստեղ մեռան, մենք էլ ցանկանում ենք այստեղ մեռնել»: Այս պատասխանից կարելի է եզրակացնել թէ մինչև ո՞ր աստիճան հայրենասիրութեան գաղափարը վառ է այս տեսակ վայրենի ցեղի մէջ: Այժմ այդ վերադարձող աբխազներին կառավարութիւնը չէ թոյլ տալիս իրանց նախկին տեղերում զետեղվել, ինչպէս որ պատերազմից առաջ ցիր ու ցան կերպով անտառների մէջ ապրում էին, այլ սրանց համար բնակութեան տեղ նշանակված է Գուդաուտա, Սուխումից մօտ 40 վերստ հեռաւորութեան վրա, յատկացնելով դրանց մշակութեան համար հողեր, ուր կարող են օրինաւոր կերպով և մի տեղում ամփոփված ապրել:

Վերջին պատերազմից յետոյ գաղթել են այստեղ նաև 25 գերմանացի ընտանիքներ, որոնց յատկացրած են եղել Սուխումից 3 վերստ հեռաւորութեան վրա բաւական ընդարձակ հողեր մօտ 2000 դէսիատին կոլոնիա հաստատելու համար: Դրանք եղել են, ինչպէս պատմում են, այստեղ վաղուցվանից ապրող գերմանացիները, սաստիկ կրօնամոլ և կոյր նախապաշարվածներ, որոնք սուրբ գիրքը գիշեր ցերեկ ձեռքից վայր չը դնելով, ամեն անաջողութիւն երկնքից տրված են համարել: Օրինակ, անցեալ ձմեռ, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և այստեղ սաստիկ ցուրտ է եղել, իսկ սրանք, չը նայելով որ հարուստ են, և չը նայելով որ կառավարութիւնը օգնում է եղել կարելի եղածին չափ, բայց ամբողջ ձմեռը բաց երկնքի տակ են ապրել, թէև իրանց շորս կողմում շինութեան համար անտառ կայ, չեն մտածել օգտվել իրանց համար գոնէ ժամանակաւոր խրճիթներ շինել, և այս պատճառով ենթարկվելով ահագին հիւանդութեանց, և իրանց ունեցած նիւթական կարողութիւնը սպառելով, մի մասը ցրվում է զանազան կողմեր, մի մասը մեռնում է և մի մասն էլ յետին աղքատութեան մէջ վերադառնում է այնտեղ, որտեղից որ եկել էր: Այդ գաղթականներից մնացել է մէկ ընտանիք յիշեալ կոլոնիայում, որը բաղկանում է երեք հոգուց՝ այր կին և 5 տարեկան փոքրիկ աղջիկ, որոնց առիթ ունեցայ տեսնել, և որոնք չը նայելով որ մօտ տարի ու կէս է ապրում են այդտեղ, դարձեալ չունեն մի օրինաւոր խրճիթ անձրևներից և ցրտից պաշտպանվելու համար: Այդ կոլոնիայի համար այժմ սպասում են նոր գաղթականներին Գերմանիայից:

Սուխումի նոր գաղթականութեան ամենամեծ մասը կազմում են յոյները, որոնք հետզհետէ շարունակ գալիս են Տաճկաստանից: Փոքր առ փոքր գաղթում են այստեղ ռուսներ և բոլղարներ, նաև հայեր Հայաստանից. առաջին անգամ 25 ընտանիք, բայց նոր էլի եկել են մօտ 150 ընտանիք, որոնք բնակութեան համար ընտրել են Պեցունդսկիյ օկրուգ կոչված տեղը Սուխումից 60 վերստ հեռու: Այս վերջին 150 ընտանիքը, ինչպէս երևում է «Մշակի» 166 համարում «Գոլոս» լրագրից արտատպած յօդուածում յիշված 300 հոգուց բաղկացած խումբն է, որոնցից 6 հոգի վերաւորվածներ այստեղի զինուորական հիւանդանոցում խնամվում են: Սրանցից մէկը 50 տարեկան, հսկայակազմ մարդ է, որը 5 մեծ մեծ վէրքեր ունի ստացած կողոպտող լաղ չարագործներից, և որը, ինչպէս պատմում են, միակ է եղել նաւի մէջ զօրաւոր պատերազմողը: Թէպէտ ես անձամբ առիթ չեմ ունեցել հաստատ տեղեկութիւններ ստանալ, բայց յիշեալ վիրաւորվածներին սկզբում բժշկական օգնութիւններ հասցնող բժշկի օգնականը պատմում էր ինձ հետևեալը, որ հայերը Տրապիզոնում նաւը վարձում են, որ նրանց բերէ Պեցունդա (երևի նախապէս ընտրած են եղել այդտեղը, որտեղ միտք ունեն գլխաւորապէս հողագործութեամբ պարապել), նաւատիրոջը վճարելով կանխիկ վարձը: Բայց Տրապիզոնում նաւավար լաղը, դուրս գալուց առաջ իմացնում է մի քանի իրա նման չարագործներին, որ իրան դիմաւորեն ծովումը հայերին կողոպտելու համար: Այս երբ նաւը ցամաքից բաւական հեռանում է դէպի ծովը, այստեղ 12 զինուորված ծովապատակներ յարձակվում են նաւի վրա և սկսում են նախ հրացանաձգութիւն անել հայերի վրա ու յետոյ թափվել նաւի մէջ ու սկսել կողոպուտը: Բարեբախտաբար անդէնք հայերի միջից մի քանի կտրիչներ փորձում են աւազակներին

*) Ինչպէս պատմում են, սաստիկ արդելված է աբխազների տոհմապետներին ու ազնուականներին վերադառնալու բացի ամենահասարակ ժողովուրդը, որին զինաթափ են անում, եւ այդ նրանց առիթ կը տայ խաղաղ կեանքին ընտելանալու:

դէմ դնել, և թէպէտ մի մասը կողոպտվում է, բայց ոչ բոլորը, և աւազակները յետ են մղվում։ Իսկ նաւը նշանակված տեղը հասնելով, կառավարութիւնը իսկոյն իմանալով պատահած անցքը, կալանաւորում է նաւատիրոջը, վանորոյ յոյս կայ, որ յայտնվեն կողոպտող աւազակներն էլ։ Ուստի երևում է, որ այդ ողորմելիները երկրորդ անգամն են ենթարկվում աւազակների կողոպուտին, մէկը դեռ ևս Տրապիզոնի ճանապարհում, իսկ միւս անգամը՝ Տրապիզոնից այստեղ գալով։

Արանից երկու շաբաթ առաջ Խարթում գտնվելով, ես նկատեցի այնտեղ բազմաթիւ հայաստանցի հայ մշակներ, որոնք բեռնակրութեամբ եւ մշակութեամբ են պարապվում, եւ ինչպէս նկատեցի, նրանց թիւը օրըստօրէ բազմանում է այնտեղ, որովհետև նրանց նման ժիր և ուժեղ մշակների համար այժմ շատ գործ կայ այնտեղ, թէ շոգենաւերում, թէ քաղաքի մէջ ու թէ երկաթուղու գծի վրա։ Վերջապէս այստեղ բոլոր մշակներ միշտ գործ ունեն եւ նրանց համար չը կայ կիրակի կամ տօն օրեր, թէ շարունակ տշխատել ուզենան, մինչև անգամ գիշերները շոգենաւերի մէջ գործ կայ։

Սուխումի աւերակների վրա այժմ բաւականին նոր նոր շինութիւններ թէպէտ կանգնեցրին, և թէպէտ շարունակ նոր տներ ու խանութներ են շինում, բայց դեռ շատ ու շատ հեռու է Սուխումը իր նախկին վիճակին նմանվելուց, ինչ որ էր պատերազմից առաջ։ Նա գուցէ շատ տարիներ կանցնեն, բայց դարձեալ յոյս չը կայ առաջվան դրութեան հասնելուն, եթէ այստեղի բնակիչները զգալի կարօտութիւններից չազատվեն։ Սկզբում նախկին բնակիչներին առաժամանակ արգելվեցաւ փողոցների ուղղութեան կամ առաջվայ աւերակ հիմքերի վրա օրինաւոր տներ շինել, առարկելով, թէ քաղաքի դիրքը նոր փոփոխութեան պէտք է ենթարկել։ միայն թոյլ տուեցին, որ ամեն մարդ իր բակում կառուցանէ ժամանակաւորապէս փոքրիկ տնակներ խառնափնթոր կերպով։ Շատերը այդպէս արեցին, բայց շատերն էլ, ստանալով գանձարանից պատերազմից կրած վնասների վարձատրութիւնը (вознагражденіе) կամաց-կամաց հեռացան զանազան կողմեր, իսկ այստեղ մնացողների վիճակը, որոնք գլխաւորապէս առևտրով են պարապվում, օրըստօրէ աննախանձելի է դառնում։ Որովհետև ընդամենը այստեղ մէկ բատալիոն զօրք կայ, ուստի ամեն մէկը աշխատում է այդ բատալիոնից իր ապրուստը ճարել և կամ ամեն մէկը ստիպված է այդ բատալիոնին իր վաճառքը վաճառելու։ Իսկ այստեղից արտադրելու ապրանքի քանակութիւնը անհամեմատ քիչ է, որը բաղկանում է գլխաւորապէս մրգեղէններից՝ խնձոր, ընկոյզ, կաղին, նուռ, սերկևիլ, սև խուրմայ, հուն, դեղձ, ձմերուկ և այլն, սիմինդր մանաւոր քանակութեամբ։ Առ այժմ կենսական անհրաժեշտ նիւթերը ստացվում են Ռուսաստանից։

Տենդը (лихорадка) կամ դողացնող ու ջերմացնող հիւանդութիւնը աւելի տարածված է վերջին երկու տարվայ միջոցում, քան թէ առաջ, բայց քաղաքի դիրքը և նրան շրջապատած հիանալի տեսարանները, բնութեան հարուստ գեղեցկութիւններով զարդարված, հրապուրում են շատերին մշտական բնակութիւն հաստատել այստեղ, առաւել որ կլիման կրծքացաւ ունեցողների վրա բարերար ազդեցութիւն է գործում, որոնք մի քանի տարի էլ կարողանում են խոյս տալ անդութ մահից։ Դժբաղդաբար տարվայ երեք եղանակներում անկարելի է մի մարդու հանդիպել իր բնական գոյնովը դողացնելու պատճառաւ, որովհետև շարունակ անձրևները փտեցնելով զանազան խոտեր և բոյսեր, և յետոյ սաստիկ շոգեր լինելով, արտադրվում է նրանցից մի տեսակ նեխեալ և վնասակար հոտ, որից ներշնչողը տենդից ազատվել չէ կարող, առաւել напортникъ կոչված բոյսից, որը քաղաքի չորս կողմումը առատութեամբ բուսնում է։

Մ. Միհրանեանց

ՆԱՄԱԿ ՋՈՒԼՓԱՅԻՑ

—

Հոկտեմբերի 16-ին

Դժուար է մի առ մի նկարագրել այն բոլոր անիրաւութիւնները, որոնք կատարվում են այս տեղի պարսից սահմանապահ (Ամին Թասարի) ձեռքով։ Քանի օր առաջ այստեղ հասան Քուրդստանից գաղթող մի քանի քորդ ընտանիք, որոնք ունէին իրանց հետ մի քանի եզներ եւ կովեր, սահմանապահը տեսնելով սրանց, հրամայեց իր ծառայողներին (ֆառաշներին) խլել խեղճերից այդ տաւարները, իսկ նրանց երկու օր քաղցած եւ ծարաւ բանտարկելուց յետոյ, թեւակապ ուղարկեց Դավրէժ։

Այժմ սկսում են Ռուսաստանից վերադառնալ դէպի Պարսկաստան սովատանջ հայ, ասորի եւ Քուրդ աղքատներ, որն հիւանդ, որն քաղցած, որն տկլոր, որոնք հազիւ են կարողանում ոտքի վրա կանգնել կամ խօսալ, բայց դեռ նաւից դուրս չեկած, ֆառաշները պատրաստ են նոցա առաջ եւ «ապամոՁ» են պահանջում։

Խեղճերը երդվում են, թէ ոչինչ չ՚ունեն, հազիւ են կարողացել մուրացկանութեամբ հասել մինչեւ այնտեղ, բայց ֆառաշն դարձեալ չէ լսում խեղճերի աղաչանքին, անպատճառ պահանջում է, ասելով, ,,դիմմա վեր՝ (տուրս մի՝ խօսիր)։ Իսկ եթէ ընդդիմանում են, այն ժամանակ փոխանակ արձակելու, ծեծում, բանտարկում են, եւ ինչ որ ունեն, խեղճերից խլում են։

Արդէն արգելված էր դէպի Ռուսաստան տանել ցորեն, դարի, բրինձ, սիսեռ, իւղ եւ այլ ուտելիքներ։ Այս քանի օրերումս հացն էլ արգելվեց։ Իսկ եթէ մէկ բեռ իւղ կամ սիսեռը տանելու համար մէկ քանի ռուբլի կամ մէկ քանի գլուխ շաքար ընծայ կը ստանայ սահմանապահը, այն ժամանակ վաճառականը ազատ է ինչ որ ուզէ տանելու. ինչպէս օրերումս մէկ բաՁման՝ որն է 24 դրուանքայ հաց տանելու համար դէպի ռուսաց կողմը մէկ գլուխ շաքար ընծայ ստացան։

Նամակս վերջացնելու ժամանակ լսեցի մի հառաչանքի ձայն, սենեակիցս դուրս եկայ, մի զարհուրելի տեսարան բացվեց իմ առաջ. մէկ ութսուն տարեկան ծերունու մէջքը բաց արած, պառկեցրել էին եւ երկու կողմից մտրակներով ծեծում էին։ Այնքան խփեցին, որ սկսեց մէջքիցն արիւն հոսալ։ Ծեծն վերջացնելուց յետոյ իսկոյն բանտարկեցին։ Հետաքրքրվեցի պատճառն իմանալ. ֆառաշներից մէկը ինձ պատասխանեց, թէ մէկ ամիս առաջ այս ծերունին ունէր մօտ հարիւր կով եւ եզներ, բայց այժմ մէկն էլ չունէ, ուրեմն ծախած է եւ առնողներն Արաքսից Ձագուն անց են կացրել. այժմ մեր ադէն (Ամին Ձաավարէն) սրանից մաքս է պահանջում։ Քառասուն ռուբլին առնելուց յետոյ արձակեցին ողորմելուն։

Է. Վ. Սեբրիւգին

ՆԱՄԱԿ ՎԱՐԴԱՇԷՆԻՑ

—

14 Հոկտեմբերի

Ամենքին յայտնի ուտիացի հայերով բընակեցրած Վարդաշէն գիւղը այժմ ներկայացնում է մի տխուր պատկեր իր ներքին երկպառակութիւնների պատճառով, որոնք յառաջացած են տեղական ծխատէր Գալուստ քահանայի ինտրիգաներով։ Այս քահանան իր անձնական շահերի համար և իր կրքերին բաւականութիւն տալու համար, վերջին հինգ տարիների ընթացքում անդադար հարստահարում, կեղեքում է գիւղական ժողովրդին։ Մէկի դէմ սուտ վկայութիւն, միւսին բանադրանք, երրորդին մատնել և չորրորդին նիւթական մեծամեծ վնասներ հասցնել—ահա այս է սրա գործը։ Վերջին հինգ տարվայ ընթացքում գործակալի պաշտօն ևս ստանալով, մէկի անշարժ կայքն է աշխատում յափշտակել, միւսի ընտանեկան անդորրութիւնը վրդովել. մի տեղ սպառնալիք է կարդում, միւս տեղ կաշառքներ կլանում, և մի և նոյն ծագումի, մի և նոյն ազգի, մի և նոյն տոհմի եղբայրների մէջ անհաշտ ատելութիւն սերմանում։ Ժողովուրդը զանազան դէպքերում բողոքեց թէ տեղական և թէ բարձր հոգևոր իշխանութեանը քահանայի արարողութիւնների դէմ, բայց ոչ մի անգամ ուշադրութեան չարժանացաւ ճնշված ժողովրդի ձայնը։ Հոգևոր իշխանութեան այս տեսակ վարմունքը այն աստիճանի սանձակոտոր արեց յիշեալ քահանայի կրքերը, որ սա վերջին ժամանակներում գործեց մի աւելի սարսափելի անիրաւութիւն, որի նմանը երևակայել անգամ չէր կարող Վարդաշէնի հասարակութիւնը, թէև դարձեալ մնաց նա անպատիժ։ Տեսնում էք, այստեղ ոչ ազգային միութեան պաշտպան լրագիրն է կարդացվում և ոչ բողոքական քարոզչի ձայնը լսվում։ Հոգևորականութիւնը ինքն է պատճառ դառնում հայերի մէջ կրօնական երկպառակութեան։ Ընարդարութիւնների քօղարկելը շարժեց վերջապէս գիւղացիների ընդհանուր զայրոյթը դէպի իր Մայր Աթոռը։ Դառնացած ժողովուրդը, յուսահատութեան վերջին կէտին հասած, այս օրերս 170 ստորագրութեամբ մի խնդիր ներկայացրեց տեղական հոգևոր կառավարութեանը, որի մէջ գրված էր. ,,կամ քննութիւն բանալով բոլորովին կարգալոյծ անել և հեռացնել մեր գիւղից յիշեալ քահանային, կամ եթէ դարձեալ հոգ. իշխանութիւնը ուշադրութիւն չի դարձնի, այն ժամանակ ժողովուրդը անզօր գտնվելով տանել հոգևորականութեան ճնշումները, հաստատ որոշել է դառնալ այլադաւան եկեղեցու դիրկը։ Այդ խնդիրը ներկայացնում է Գալուստ քահանայի գործած բազմաթիւ յանցանքների մի շարք, որին վկայում է մօտ 200 հոգի, իսկ աւելի յանդուգն յանցանքները, խնդրատուների ասելով, կը յայտնեն քննութեան ժամանակ։ Փաստերը անհերքելի են։

Տեսնենք, կը շտապի՞ Էջմիածինը առնել այս բոլոր չարիքների առաջը, թէ իր սովորական անտարբերութեամբը իր քաջ և ընդունակ զաւակների մի նշանաւոր բազմութիւն, դիտմամբ հեռացնելով դարերով նրանց պաշտած եկեղեցու ծոցից, կը ձգէ մի օտար եկեղեցու դիրկը։

Երբէք լսեցինք, որ ոչ միայն խնդիր առաջարկող հարիւր եօթանասուն հոգին, այլ Վարդաշէնի լուսաւորչադաւան ամբողջ հայ հասարակութիւնը Տէր-Գալուստի պատճառով մտադիր է շուտով ընդունել յունական դաւանութիւնը։

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք մի աշխատութիւն պ. Յովհաննէս Տէր-Աբրահամեանի «Ընտիր առակներ Եզովպոսի եւ Քռիլովի» քսան վիմագրական պատկերներով։ Տպված է Բոստով (Դօնի վրա) քաղաքում, ներկայ 1880 թուին։

—

Ամսիս 25-ին վախճանվեցաւ Թիֆլիսում մի պառաւ կին, որ 121 տարեկան էր։

—

Թիֆլիսի կառապանները շատ անզգուշութեամբ են քշում կառքերը։ Մօտ օրերումս մի երեխայ ընկաւ քշած կառքի անիւների տակ եւ մեռաւ, իսկ կառապանը անյայտացաւ։

ԸՐՏՈՒՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Վիէննայից լրագիրներին գրում են հեռաւեալը հոկտեմբերի 22-ից։ Երդէն մի քանի օր է, որ գօկտոր Ռիգեր գտնվում է Պեշտի մէջ չեխերի և ունգարացիների յարաբերութիւնները լաւացնելու նպատակով, մինչդեռ մինչև այժմ այդ երկու ազգութիւնները ընդհանուր շահեր չեն ունեցել։ Այստեղի լրագիրները լցվում են ահագին յօդուածներով Ռիգերի ճանապարհորդութեան մասին և ճշմարիտ գերմանացիների դրութիւնը բաւական կասկածաւոր է։ Մի կողմից գերմանացիները պէտք է աշխատեն հաստատել, որ այդ ճանապարհորդութիւնը քաղաքական հետևանքներ չէ կարող ունենալ, որ չեխերի և ունգարացիների միանալը աներեւակայելի է, որ այդ երկու ազգութիւնների արտաքին քաղաքականութիւնը տարբեր է, միւս կողմից նոյն գերմանացիները պէտք է աշխատեն Ռիգերի ճանապարհորդութեանը քաղաքական նշանակութիւն տալ, որ կարողանան յարձակվել Տաաֆէի մինիստրութեան վրա։ Գերմանական լրագիրները աղաղակում են, որ քաղաքագէտները օգուտ են քաղում Ունգարիայի հակագերմանական տրամադրութենից, կամենում են միանալ այդ երկրի գործողների հետ գերմանական կուսակցութեան շահերին վնասելու համար։ Ահա այսպիսի դրութեան մէջ են այժմ աւստրիական գերմանացիները և Պրագայի „Politik“ լրագիրը «այժմ ի՞նչ է անում գօկտոր Ռիգեր» հարցրին պատասխանում է. «շատ աղմուկ է գցում»։ Մի ժամանակ Ռիգեր ճանապարհորդեց Մօսկվա և այդ ճանապարհորդութիւնը շատ վնասեց չեխերի առաջնորդին։ Այստեղ լուր է տարածված, որ Ռիգեր շուտով մինիստրի պաշտօն կը ստանայ։

Հարկաւոր է հաղորդել նոյն իսկ Ռիգերի կարծիքը իր ճանապարհորդութեան մասին, որ նա յայտնել է «Pesti Naplo» լրագրի խմբագրին։ Ռիգեր ամենից առաջ ցաւակցութիւն է յայտնում, որ 1847 թուականին ինքը Պեշտի մէջ չէ եղել և որ չեխ քաղաքագէտները իրանց հեռու էին պահում ունգարացիներից։ Դա գլխաւոր պատճառ էր, որ մինչև այժմ չեխերի և ունգարացիների մէջ անբաւականութիւն է տիրում։ Ռիգեր եկել է Պեշտ ունգարական գործերը ուսումնասիրելու և ունգարացիներին չեխերի ցանկութիւնների հետ ծանօթացնելու համար։ Նա ոչ ոքից յանձնարարութիւններ չէ ստացել և լրագիրների հաղորդած լուրերը այդ մասին ըսխալ են։ Ռիգեր խօսակցել է ունգարական առաջին մինիստր Տիսսայի և ունգարացի պատգամաւորների հետ և այդ խօսակցութիւնների գործած տպաւորութիւնները բաւականացուցիչ են։ Պեշտի մէջ այն կարծիքի են, որ գերմանացիների առաւելութեան պահպանելը Աւստրիայի մէջ ունգարացիների համար անհրաժեշտ է։ Ռիգերը այդ հանգամանքը չէ կարող հասկանալ։ Մինչ աւստրիական գերմանացին աւելի մեծ բարեկամ է ունգարացուն, քան թէ Գալիցիայի լեհացին։ Մինչ գերմանացիները չէին ոչնչացնի ունգարական սահմանադրութիւնը, եթէ Աւստրիայի մէջ չեխեր և լեհացիներ չը լինէին։ Վիէննայի լրագիրները բամբասում են չեխերին. նրան ասում են, որ չեխերը կղերական և աւատական են։ Մինչ կարելի է ենթադրել որ չեխերը չեն հասկանում աւատական ժամանակների կարգերի վնասակարութիւնը։ Խօսելով չեխերի կղերական-

նութեան մասին Ռիգեր ասում է, որ չեխերի գեղեցիկ պատմութիւնը ռէֆորմացիայի մասին հերքում է այդ մեղադրանքը։

Ասում են, որ չեխերը հալածում են գերմանացիներին։ Դրանք դատարկ խօսքեր են. հինգ միլիոն չեխերը ամբողջ Չեխիայի երեք քառորդն են կազմում։ Չեխիայի մէջ գտնված 36 միջնակարգ ուսումնարաններից 30 գերմանական են, իսկ միայն 6 չեխական։ Ահա այսպէս են հալածում չեխերը գերմանացիներին, որոնք մեծամասնութիւն են կազմում պատգամաւորների ժողովի մէջ, որտեղ չեխերը միայն մէկ ներկայացուցիչ ունեն։ Վիէննայի լրագիրները պնդում են, որ չեխերը կրթված ժողովուրդ չեն և այդ պատճառով ցանկանում են գերմանական կուլտուրայի առաւելութիւնը։ Այդ մեղադրանքը հերքելու համար բաւական է այցելել Պրագայի արհեստանոցները, որոնք կառավարվում են չեխ արհեստաւորներից։ Չեխիայի գործարանները մեքենաներ են պատրաստում ռուսական և լեհական շաքարի 20 գործարանների համար։ Չեխիայի մէջ շաքարի բազմաթիւ գործարաններ կան, որոնք կառավարվում են չեխ գիւղացիներից։ Աասլաու քաղաքի օգնական կասան տարեկան 12 միլիոն ունի շրջաբերութեան մէջ, իսկ այդ քաղաքի բնակիչները ընդամենը 4000 են։ Այս բոլորը կատարել են չեխերը իրանց ինքնազործունէութեան շնորհիւ, առանց կառավարութեան օգնութեան, մինչև անգամ կառավարութեան կամքի հակառակ։ Եթէ չեխերը կամենում են մասնակցել հասարակական գործերին, այդ չէ նշանակում, որ նրանք կամենում են վնասել ունգարացիներին։

ՍՈՎԻ ԱՌԻԹՈՎ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Երկու հեռագիրք սովեալ գաւառաց ներկայ և ապագայ վիճակը խիստ լաւ կը բացատրեն և բնաւ պէտք չեն թողուր մեր ամէն կարգի ազգայիններն յորդորելու, որպէս զի ի նպաստ սովելոց նուիրել փութան իրենց գթութեան լուման, որով միայն պիտի կրնայ փրկվել հայն Թիւրքաց Հայաստանի մէջ։ Հայաստանը հայուն հայրենիքն է, հետևաբար հայն Հայաստանի համար պէտք է։

Ահաւասիկ խորին ուշադրութեան արժանի խօսք մը, որ ամէն բան կը բացատրէ։

Ազգին մէջ վերջին ժամանակներս խիստ գովելի շարժում մը սկսած է երևիլ. ինչպէս ազգին օգնելու, նոյնպէս հայերէն լրագիր կարդալու փափագ մը կերևի շատերուն վրա, որ յառաջադիմութեան նշան է։

Այսպիսի շարժում մը քաջալերական է, որ հարկաւ ուշադրութենէ չը կրնար վրիպիլ։ Ժողովրդի մը ազգայնութեան յատկանիշը գլխաւորաբար երկու բան է, այն է լեզու և հայրենիք։ Հայն ունի հայրենիք, որոյ քաղցր յիշատակն ամէն հայու մտացը մէջ աջնջելի է։ Իսկ լեզուն բոլորովին իրն է և անոր համար բնաւ մէկէ մը կախում չունի։ Լեզուն միջոց մէ, որով մարդ իր գաղափարները կը բացատրէ և միտքը կը յայտնէ։ Հայն ամէն բան վրա տուաւ, միայն իր ազգայնութիւնը պահպանելու համար և կրցաւ իսկ, որովհետև պահեց իր լեզուն, որ իր ազգայնութեան գանձարանն է, ուր անկորուստ պահուած են իր ամենէն նուիրական աւանդները։ Լեզուի յառաջադիմութիւնը գաղափարաց յառաջադիմութիւն կենթադրէ։ Որովհետև ազգ մը գաղափարներով կապրի և աշխարհ իսկ գաղափարներով կը կառավարուի, ուրեմն լեզուի յառաջադիմութիւնն էական պէտք մը է։ Գոհ ենք որ այս պէտքը ճանչուած և շատ թրքաբարբառ գաւառաց մէջ ատոր մեծ կարևորութիւն տրուիլ սկսած է։ Իբր օրինակ պարծանօք կրնանք յառաջ բերել Կեսարիոյ ազգային վառ երիտասարդութիւնն, որ հայերէն կարդալու և խօսելու մասին իրար գերազանցելու գովելի մրցում մը սկսած է։ Կը ցաւինք, սակայն, որ Պրուսայի գաւառագլուխը տխուր հակապատկեր մը կընծայէ, ինչպէս նաև Դաղատիոյ գաւառագլուխն, ուր ամենայն ինչ լքեալ է։

(Լոյս)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Թէհրանից „Էյտերի“ ընկերութեանը հեռագրում են հոկտեմբերի 23-ից։ Դիւրդ ապստամբները նորից սկսեցին կողոպտել երկիրը։ Նրանք աւերակ դարձրին մի քանի գիւղեր և այժմ մտել են Սալմասի նահանգը։ Ռինաբի մէջ հաւաքած պարսկական զօրքերը չափազանց թոյլ են ապստամբների վրա յարձակվելու համար։ Թէհրանից ապստամբների դէմ ուղարկված 2500 զինուորները 12 թնդանօթներով անցան Կազվին քաղաքից։ Զինուորական և արտաքին գործերի նախկին մինիստր Սիփակ-Սալար-Ազամ Ադրբէջանի գլխաւոր նահանգապետ է նշանակված և արդէն հասաւ Թաւրիզ։

Լօնդօնի մէջ հրատարակվող „Standard“ լրագրի սեփական թղթակիցը Թէհրանից, հոկտեմբերի 25-ից հաղորդում է հետևեալ մանրամասն տեղեկութիւնները քիւրդերի ապստամբութեան մասին Պարսկաստանի մէջ։ Ընդքերը այստեղ չափազանց արագ են պատահում և գործերի դրութիւնը փոփոխուած է։ Դիւրդերը, որոնք վերջին ապստամբութիւնից յետոյ դեռ մի քանի օր առաջ իրանց հանգիստ էին պահում, յանկարծ ապստամբվեցին, պաշարեցին Ուրմիա և պահանջում են, որ երեք օրվայ ընթացքում քաղաքը իրանց յանձնվի։ Անգլիական գլխաւոր հիւպատոս, պ. Աբբոտ այժմ այդ քաղաքի մէջ է գտնվում։ Նա միջնորդում է և աշխատում է քաղաքի յանձնելու ժամանակամիջոցը երկարացնել և առաջն առնել այն սարսափելի արիւնհեղութեան, որ անպատճառ կը պատահի, եթէ քիւրդերը յարձակվին քաղաքի վրա և ուժով նրան վերցնեն։ Ուրմիային օգնելու համար Սեմարայի տեղացիների խումբերին առաջնորդելով մի քանի անուանի խաների հետ գնում են Թայմուր-փաշա և Իցխան-փաշա եղբայրները։ Լճի միւս կողմը Սանջբուլաղի և Մարագխայի նահանգների մէջ գտնված քիւրդերի ոյժերը աւելի էլ զօրեղ են։ Թաւրիզի զօրքերի հրամանատար Էհտիմադ-Սուլտանէ ոմբակոծում էր քիւրդերի ամրացած գիրքերը Ռինաբի մէջ, Մարագխայի մօտ, բայց իր զօրքերի թիւի պակասութեան պատճառով չը կարողացաւ օգուտ քաղել այն առաւելութիւններից, որ տուեց նրան թնդանօթաձգութիւնը։ Փաբրիզի և Լօնդօնի պարսկական նախկին դեսպան Հասան-խանը օգնական զօրքեր է ուղարկում Դերասից, որտեղ արդէն հասել է պարսկական զօրքերի գլխաւոր հրամանատար Ռիշմեդ-Դովլէ։ Սա պայմանաւորվել է թիւրքաց կառավարութեան հետ, որ այս վերջինը Վանից զօրքեր ուղարկի քիւրդերի դէմ, պարսկական զօրքերին օգնելու համար։ Շէյխ Իբադուլլահ յայտնեց իրան անկախ թագաւոր և մի շրջաբերական հրատարակեց, որով պահանջում է պարսկահպատակ և թիւրքահպատակ քիւրդերից միանալ իր իշխանութեան տակ։ Գործերի դրութիւնը եթէ վտանգաւոր չէ, դեռ չափազանց դժուար է։

Թէհրանից „Standard“ լրագրի սեփական թղթակցը հոկտեմբերի 27-ից գրում է հետևեալը քիւրդերի ապստամբութեան մասին։ Թաւրիզից այսօր ստացված հեռագիրների համեմատ շէյխ Իբադուլլահի որդին և նրա եղբայր Համզա-աղա-քիւրդ պատնված են Ուրմիայի առաջ այդ քաղաքի զօրքերի թնդանօթաձգութեան ժամանակ։ Այդ փաստից կարելի է եզրակացնել, որ բանակցութիւնները քաղաքը քիւրդերին յանձնելու մասին ընդհատված են։ Ասում են, որ Ուրմիային օգնելու համար երէկ հասաւ Թայմուր-փաշա-խան և բերեց իր հետ Աշշարայի լեռնաբնակներին։ Միչև այժմ յայտնի չէ՝ արդեօք քիւրդերը վերջացրել են Ուրմիայի պաշարումը, թէ ոչ։ Իսկոյն Թաւրիզից հեռագիր ստացվեցաւ, որ շէյխ Իբադուլլահի որդին, շաբաթ, հոկտեմբերի 23-ին սպանվեցաւ ոչ թէ Ուրմիայի առաջ, ինչպէս առաջ հաղորդում էին, այլ Մարաղայի ամրացած դիրքերի վրա յարձակվելու ժամանակ։ Հաստատ յայտնի է, թէ Թայմուր-փաշա-խան հոկտեմբերի 24-ին հասել է Սալմաստ, որից Ուրմիան երկու օրվայ ճանապարհով է հեռու, իսկ Իցխան-փաշա հետևում է նրան մի օրվայ անցքի հեռաւորութեամբ։ Այն լուրը, որ այսօր ձեզ հաղորդեցի, թէ Ուրմիայի պաշարումը վերջացած է, չը հաստատվեցաւ։ Յոյս ունեն, որ Հասան-Ալի-խանի զօրքերը հոկտեմբերի 29-ին կը միանան Իշտիմադի զօրքերի հետ, որոնց բանակը Մարաղայի մօտ է։ Միևնոյն օրը աւստրիական օֆիցերներից առաջնորդված Թէհրանի զօրքերը կը հասնեն Պերսս։ Թաւրիզի բնակիչները ամրացնում են քաղաքը և նրա փողոցները։ Այդտեղ կամաւորներ են հաւաքում և նրանց զինաւորում։

Թէհրանից „Daily News“ լրագրին գրում են հոկտեմբերի 26-ից հետևեալը։ Դիւրդերի թիւը հասնում է 15,000 և բաժանված է երեք մասերի, որոնցից երկու մասը կանգնած է Ուրմիայի լճի արևելեան կողմը, իսկ մի մասը՝ արևմտեան կողմը։ Նրանք չունեն թնդանօթներ, բայց մեծ թիւով Մարտինի ձևի ծանր հրացաններ ունեն։ Դիւրդերի առաջին զօրաբաժինը գտնվում է Թաւրիզից 30 մղոն տարածութեամբ հեռու։ Պարսկական զօրքերն էլ, բացի անկանոն հեծեալներից, երեք զօրաբաժիններ են կազմում։ Դրան և հինգ հազար մարդկերանցից բաղկացած առաջին զօրաբաժինը Մաքուից գնում է Ուրմիա։ Այդ զօրաբաժինը թնդանօթներ չունի։ Երկրորդ զօրաբաժինը 3000 զինուորներից կազմված Թաւրիզի և Մարաղայի մէջն է գտնվում և վեց թնդանօթներ ունի։ Թէհրանից դուրս եկած 3000 մարդկերանցից բաղկացած երրորդ զօրաբաժինը 12 թնդանօթներ ունի և այժմ գտնվում է Զանջանի մօտ։ Թաւրիզը վտանգի է ենթարկված։ Բնակիչները պաշտպանողական պատրաստութիւններ են տեսնում և ամրացնում են քաղաքը։ Դիւրդերը կոտորում են բնակիչներին և առհասարակ նրանց հետ անգթաբար են վարվում։ Դրիստոնեաների հետ քիւրդերը աւելի լաւ են վարվում, քան թէ մահմեդականների հետ։ Մինչև այժմ միայն մի կռիւ է եղել Միանդաբի մէջ։ Պարսիկները ջարդվեցան, քաղաքը աւերակ դարձաւ, իսկ բնակիչների մեծամասնութիւնը կոտորվեցաւ։ Շրջակայ գիւղերը այրված են։ Վերջին լուրը պարսիկների յաղթութեան մասին չէ հաստատվում։

«ԴԷԼԻ-ՆԻՈՒՍ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Կ. Պոլսից մի թղթակից հաղորդում է «Դէյլի-Նիուս» անգլիերէն լրագրին «Պարլամենտի անդամ միստր Բրայս և պոլսեցի հայեր» վերնագրով հետևեալը, որ համարեա թէ բառ առ բառ Հայկի ասածներն է հաստատում։

„Երբոր միստր Բրայս դուրս եկաւ Օրմիւռնայից Կ. Պոլիս գնալու համար, այդ քաղաքի հայերը հեռագրեցին հայոց պատրիարքին թէ միստր Բրայս կարճ ժամանակում կը հասնի Կ. Պոլիս, սակայն այդ հեռագիրը յանձնեցին միստր Բրայսի թիւրքաց մայրաքաղաքը հասնելուց երկու ժամ յետոյ։ Ուստի զարմանք չը կայ կասկածելու որ Բ. Դուռը աշխատել է խանգարել մի ցոյց, որ պիտի տեղի ունենար 'ի պատիւ պարլամենտի ազատամիտ կուսակցութեան մի անդամի։ Բայց այնուամենայնիւ հայերը դարձեալ հնարք գտան այնպիսի մի ցոյց գոյացնելու, որը խափանեց միստր Բրայս գոհանալով նրանց բարի դիտաւորութեանց մասին։ Հայ հասարակութեան առաջնորդող անդամները այցելեցին նրան Թերապիայում, և այլ և այլ պատգամաւորութիւններ ներկայացան նրան անգլիերէն և հայերէն լեզուով խօսած ճառերով։ Կա ներկայ էր հայոց ազգային ժողովի մի նիստին Գալաթիայում, և նիստից յետոյ անդամները սպասում էին նրան գրատանը և նրան յայտնեցին հայոց ազգի շնորհակալութիւնը դէպի Անգլիայի ազատամիտ կուսակցութիւնը։ Միստր Բրայս այցելեց նաև հայոց եկեղեցին և դպրոցը Գալաթիայում, նոյնպէս Բաղիեդանի ուսումնարանը, և ցոյց տուեց իր գոհունակութիւնը Հայերի դաստիարակութեան գործում արած առաջադիմութեան մասին։ Նրան հիւրընկալեցին մի շքեղ խնճոյքի մէջ, ուր ներկայ էր Կ. Պոլսի հայ հասարակութեան ընտիր մասը։ Այնտեղ ներկայ գտնվող տիկնանցից շատերը խօսում էին անգլիերէն։ Միստր Բրայս պատասխանելով այն եռանդուն ճառերին, որ արտասանվում էին մեծապէս համակրելով Անգլիայի կառավարութեանը և ազգին, ասաց թէ ինքը և իր բարեկամները երբէք չեն ձգի հայոց խնդիրը, մինչև որ թիւրքաց հայերին արդարութիւն լինի։“

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբերի։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ երէկ և այսօր տպված է ութ գլուխ մեղադրական ակտից քաղաքական այն գործի, որի քննութիւնը սկսվեցաւ Ս. Պետերբուրգի զինուորական դատարանի մէջ հոկտեմբերի 25-ին։ Այդ գործի հետ կապված է վերջին ժամանակների ամենածանր յանցանքների մեծ քանակութիւնը, որի մեծամասնութիւնը յայտնել է իշխան Կրապոտկինին սպանող այժմ վախճանված հրէայ Գոլդենբերգ։ Զմերային պալատը ճայթեցնողը Վեատկեան նահանգի գիւղացի Ստեփան Խալտուրինն է եղել, որը մտել էր պալատը կեղծ անցագրով գիւղացի Բատիշկովի անունով։ Այդ յանցանքին մասնակից է Գվեատկովսկի։ Այսօր արդէն երրորդ օրն է, ինչ գործը քննվում է։ „Берегъ“ լրագրին հեռագրում են, որ Իշխան Գորչակով մահամերձ հիւանդ է։

Կ. ՊՈԼԻՍ, 26 հոկտեմբերի։ Թիւրքաց զինուորական նաւատորմը ուղևորվեցաւ Պրիտ կղզին։

ՖԵՐՐՈԼ, 26 հոկտեմբերի։ „Լիվադիա“ նաւը կը մնայ Ֆերրոլի մէջ մինչև նոյեմբերի վերջը։ „Times“ լրագիրը հաղորդում է, որ „Լիվադիա“ նաւի մէջ մեծ քանակութեամբ ջուր է մտնում, որ ջրհանները անկարող են ջուր դուրս ածել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ եռամեայ պատկերազարդ հանդէսն կը հրատարակուի 1881 թուականին չորս անգամ, այն է՝ **Յունուարին, Ապրիլին, Յուլիսին և Հոկտեմբերին**: Նորա իւրաքանչիւր տետրը կը պարունակէ իւր մէջ 3—4 քառածալ թերթ 12—16 պատկերներով նոյն ձևով, ինչպէս հրատարակուեցաւ մինչև ցայսօր:

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիսի նիւթն, ուղղութիւնն, տպագրութեան գեղեցկութիւնն և պատկերաց ընտրութիւնն կը մնան անփոփոխ ինչպէս էին մինչև ցայժմ:

Տարեկան բաժանորդագրութեան գինն, հանդերձ առաքմամբ, է 5 ռուբլի կանխիկ վճարելի: Խմբագրութեան հասցէն այս է. *Москва, Меньшикова башня, домъ Милованова, Ея Превосходительству Издательницѣ армянскаго журнала „Маякъ Арменій“ Софьѣ Мсеріанцъ.*

Ուսանողների համար կարող են բաժանորդ գրուիլ բաց 'ի խմբագրութենէն՝ նաև ներկայ ամի պատուելի գործակալաց մօտ, ևս և 'ի Տփխիս՝ Կենտրոնական և Օ. Գրիգորեանցի գրավաճառանոցներում, և Յերևան՝ Գ. Եզգար Գուլամիրեանցի մօտ:

Եթէ «ՓԱՐՈՍԻ» 1880 ամի պատուելի բաժանորդքն բարեհաճին նորոգել իւրեանց բաժանորդագրութիւնը և առաջիկայ 1881 տարւոյ համար՝ մեր հանդիսի հրատարակութիւնն ապահովուած կը լինի:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՍՈՓԻԱ ՄՍԵՐԵԱՆՑ

9—10

ՊԱՏԻՒ ՈՒՆԻՄ ՅԱՅՏՆԵԼ, Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, մանաւանդ **ԹԻՒՐՔՅԱՆ ԾԽԱԽՈՏԸ** սիրողներին, որ ներկայ ամսվայ մէջ ծխախոտի մեր **ԳՈՐԾԱՐԱՆԻ** մէջ ստացված են Թիւրքիայից **ԱՄԵՆԱԲԱՐՁՐ** յատկութիւնների **ԾԽԱԽՈՏՆԵՐ**, այսինքն՝ **ԵՆԻՋԻՕ ԿԻՕԲԻԿ, ՊԵՐԱԼԱՆ ՐԱՄԱ, ՀՈՒՄԱ, ՐԱՖԻԱ** և **ՍԱՄՍՈՆ** ամենաբարձր տեսակից: Յիշեալ ծխախոտներից միայն **ՊԱՏՈՒԻՐՈՂՆԵՐԻ** համար կը պատրաստվեն: **ԳԻՆԸ 1 ՖՈՒՆՏԻ** համար **Վ. ԵՑ ՏԵՍԱԿՆԵՐԻՑ** 4, 5, 6, 8, 10 և 12 ռ., մի ֆունտ **ՍԱՄՍՈՆԻ ԾԽԱԽՈՏԸ** արժէ 3, 4 և 5 ռ., պ. պ. գնողներին խնդրում եմ իրանց **ՊԱՏՈՒԻՐՆԵՐՈՎ, ԴԻՄԵԼ** ծխախոտի իմ **ԽԱՆՈՒԹԸ**, որ գտնվում է **ԴՎՈՐՑՈՎԱՅՑ** փողոցի վրա, **ԵՐԾՐՈՒՆՈՒ** տանը № 1: **ՕՏԵՐԵՆՔ ԵՐԵՑԻ** պարոններին խնդրում եմ պատուէրներ **ՆԱՄԱԿՆԵՐՈՎ** և **ՓՈՂ** ուղարկել պատուէրների համեմատ: Պատուէրները անյապաղ կը կատարվեն և կուղարկվեն առաջին **ՓՈՍՏԱՅՈՎ**:

Գործարանատէր Ն. ՐՈՉԵՐԴԵՆՑ



Կ. ՊԱՆՑԵՐ



ԷՏԱՄԱՆՍԿԱՅԻ ՓՈՂՈՑ տուն Զուբալովի: Նկող ձմեռվայ սեզոնի համար առաջարկում են պատուելի հասարակութեանը ՄԵԾ ԳԻՆԵՐՈՎ ԿԱՐՈՂՈՒԹԵՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ամենանոր ՁԵՒԵՐԻ չափազանց էժան գներով, այսինքն՝ Ձեռքի մեքենաներ 12—15 ռուբլ: Ոտքի 50—80 ռուբլ:

19—52

ՕՐԱՑՈՑՑ
1881 թ.

Ռ. Յ. Տէր-Աբրամեանցի, գինն է 15 կոպէկով:

Վաճառվում է Զաքարեա Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում» Տփխիս:

3—20

Ֆ. Կ. ՁԱՄԼԻՆՍԿՈՒ ԴԵՂԱՏԱՆ ԿԻՑ ՄԻԽԱՅԼՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ Տ. ԿՈՏՐԻՆԻ: Ամենայն օրը ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը ներքին, երեխայական, ջղային, վիներական և կաշու հիւանդութիւններ ունեցող ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

6—6

Երիվանի, ոսկու և արծաթի իրեղէնների **ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍՈՎ Ի ԽԱՆՈՒԹԸ** և **ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ** Կաթոլիչեսկայա փողոցի անկիւնից Աբմեանսկի բազարի վրա տեղափոխված է **Դավոցցովայա** փողոցը **ԵՐԾՐՈՒՆՈՒ** տանը: Իրեղէններ գնելու, պատուէրներ տալու և իրեղէնները նորոգելու համար խնդրում եմ դիմել իմ խանութը: Նոյն տեղը ստացված է մեծ քանակութեամբ ոսկի, արծաթի և բրիլեանտի իրեղէններ և ժամացոյցներ: Գները չափազանց էժան են:

Մ. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍՈՎ

1—3 (2)

ОБЪ ИЗДАНІИ

въ 1881 году въ г. Тифлисѣ еженедѣльнаго русскаго юридическаго журнала

„СУДЕБНЫЕ ПОРЯДКИ“

Журналъ „Судебные Порядки“ будетъ выходить съ января 1881 года по воскресеньямъ, въ объемѣ не менѣе двухъ листовъ небольшого формата, подъ редакціею присяжнаго повѣреннаго округа Тифлисской судебной палаты Александра Ивановича Карабекова, по слѣдующей программѣ:

ПРОГРАММА

еженедѣльнаго юридическаго журнала „Судебные Порядки“

1) Передовыя статьи, заключающія въ себѣ общіе взгляды на состояніе правосудія въ судахъ гражданскихъ и положительнаго законодательства.

2) Судебные процессы, имѣющіе общественный интересъ.

3) Юридическія замѣтки и изслѣдованія, имѣющія предметъ обсужденіе общихъ началъ права, отдѣльныхъ законоположеній, мѣстныхъ обычаевъ, судебныхъ рѣшеній, опредѣленій и т. п.

4) Юридическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о явленіяхъ общественной жизни, имѣющихъ юридическій интересъ.

5) Библіографическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о вновь выходящихъ юридическихъ сочиненіяхъ.

6) Офиціальныя извѣстія, содержащія въ себѣ свѣдѣнія о новыхъ законоположеніяхъ, распоряженіяхъ правительства, движенія по службѣ, судебные указатели и резолюція по дѣламъ, назначеннымъ къ слушанію въ Тифлисскомъ окружномъ судѣ и Тифлисской судебной палатѣ.

7) Фельетонъ: а) полемическія статьи, не имѣющія характера передовыхъ статей, и б) отдѣльныя мелкія статьи юридическаго характера, не вошедшія въ составъ предидущихъ отдѣловъ.

8) Объявленія.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ съ доставкою въ Тифлисѣ и пересылкою въ другіе города Россіи **семь** рублей, на полгода, для подписчиковъ г. Тифлиса **четыре** рубля, для иногородныхъ **четыре рубля пятьдесять коп.**, по почтовому союзу—на годъ **десять** руб.; отдѣльные нумера по **двадцати** коп.

Подписка принимается: въ Тифлисѣ: до 1 декабря сего года въ квартирѣ редактора, на Коджорской улицѣ, домъ № 8, а съ 1 декабря въ помѣщеніи редакціи —въ пассажѣ каравансарая Тамамшевыхъ, на Эриванской площади, въ г. Елисаветполѣ—уполномоченнымъ при управленіи государственными имуществами Р. И. Карабеговымъ. въ г. Кутаисѣ—присяжнымъ повѣреннымъ М. А. Кикодзе, въ г. Эривани—присяжнымъ повѣреннымъ В. И. Егіазаровымъ.

Редакторъ-издатель **А. КАРАБЕГОВЪ.**

(10) 2.

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ ուսում է ստացել Փարիզում և Լօնդօնում, տալիս է Ֆրանսերէն և անգլիերէն լեզուների դասեր: Հասցէն Սապէրնայա փողոց, № 37:

3—6

Ծախվում է մի ԿՏՈՐ ՀՈՂ 400 քառակուսի սաժէն Կուր գետի երկրորդ անցքի մօտ, իւրաքանչիւր սաժէնը 25 ռուբլիով: Հարցնել Մ'իխայլովսկայա փողոցի վրա, Գուրգէնբէկովի տանը, № 5:

3—5

ՌԵՎԱԼԻՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԲԱՋՈՒՄՆԵՐ է ներկայ տարվայ հոկտեմբերի 15-ից, Սալալակի, Գանձակայա փողոց, տ. Գանչարովայի խանութից վերև, կնեազ Ռեբութովի տանը №№ 2 և 3: Այդտեղ կարելի է ստանալ մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձև հագուստներ, ինչպէս բոտնդներ, գլխարկներ, զանազան տեսակի պալտօներ և մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձև գլխարկներ և նրանց պատկանելիք: Նոյն տեղը կարելի է գտնել զանազան նկարների դրապներ, կաստոր և թաւիշ (մախմուր): Ընդունվում են նոյնպէս ամեն տեսակ պատուէրներ: Գները ամենաչափաւորն:

1—10

ՎԱՐԺՈՒՀԻ ՐՕԴՕՉԵՎԻՉ ԴԱՍԵՐ է փնտռում և պատրաստում է երեխաներին բոլոր ուսումնարանների համար: Հասցէն կարելի է իմանալ **ԷՆԳԻՄՆԱՂԵՄՆՑԻ** գրավաճառանոցի մէջ:

2—3

Մինչև առաջիկայ 1881 թիւ յունվար ամիսը ՇՈՒՇԻ քաղաքում կը տպագրվի և առանձին գրքով լոյս կը տեսնի ՐԱՖՖԻԻ «ԽԵՆԹԸ» անունով վիպասանութիւնը: Տպագրութիւնը կը լինի գեղեցիկ և մաքուր թղթի վրա: Իւրաքանչիւր գրքի գինը կանխապէս բաժանորդ գրվողների համար նշանակվում է 1 ռուբլի: Իսկ տպագրութիւնից յետոյ գնողների համար գինը կը բարձրանայ: Պ. պ. բաժանորդները թող բարեհաճեն իրանց վճարը ուղարկել այս հասցէով. Шуша. АВЕЛЬЮ ДАВИДОВИЧУ АЙРЕСЯНЦУ. Въ конторѣ АРУНЯНЦА.

Հրատարակիչ ԱԲԵԼ Դ. ԱՅՐԷՍԵԱՆՑ

6—10

Դուրս եկաւ մամուլի տակից «Մանկական ձայնագրեալ երգարան» խմբագրութեամբ Եզնիկ քահանայի Երզնկեանց: Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի: Ընդունուած է Ներսիսեան դպրանոցում և թեմական վերատեսչի բարեհաճութեամբ Տփխիսի բոլոր ուսումնարաններում: Վաճառվում է բացառապէս Զ. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում», գինն է 40 կ., դումարով առնողներին զիջումն կը լինի:

8—10

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ տղամարդկերանց, կանանց և երեխաների ԿԱՍՏՈՐԻ ՇԼԵԱՊԱՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՐԿՆԵՐ և այլ նորաձև ապրանքներ արտասահմանի նորաձև պահեստի մէջ, որ գտնվում է ԴՎՈՐՑՈՎԱՅԱ փողոցի վրա ՍԱՐԱՋԵՎԻ ԵՒ ԾՈՎԵԱՆՈՎԻ տանը ՎԵՐԻՆ ՅԱՐԿԻ մէջ, Գիրգիզովի վարշավեան ոսնամանների խանութի վերևը: ՄՈՒՏՔԸ ԲԱՑԻ: Տղամարդկերանց ՇԼԵԱՊԱՆԵՐ 2 ռ. 55 կ-ից և աւելի թանգ:

Մերոն Գուլասպեանց

7—10

Дозволено цензурою. Тифлисъ, 28 Октября 1880 года. Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.